15.01.2021
346-85

ՀՀ պաշտպանության նախարար
Վաղարշակ Հարությունյանին

Հարգելի պարոն Հարությունյան,

համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ եւ 51-րդ հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Ի՞նչ իրավական փաստաթղթի, համաձայնագրի, հայտարարության հիման վրա են ՀՀ Զինված Ուժերի ստորաբաժանումները կատարել դիրքային փոփոխություններ Սյունիքի եւ Գեղարքունիքի մարզերում, որի արդյունքում ադրբեջանական զինված ուժերն առավել մոտեցել են ՀՀ բնակավայրերին, ենթակառուցվածքներին, արոտավայրերին, արդյունաբերական համալիրներին կամ զբաղեցրել բնակավայրերի մի մասը:

2. Խնդրում ենք տրամադրել համապատասխան փաստաթղթի/երի բնօրինակ պատճեն/ները:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում: Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) եւ հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը: Նշենք, նաև, որ համաձայն ՀՀ կառավարության 15 հոկտեմբերի 2015 թվականի N 1204-Ն որոշման՝

- Եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ՝ նշելով չտրամադրման հիմքերը (օրենքի համապատասխան նորմը):
- Սույն կարգի 6-րդ կետով սահմանված դեպքում տեղեկությունը (տրամադրման ենթակա փաստաթուղթը) պետք է տրամադրվի մերժման ենթակա տեղեկություններն անընթեռնելի դարձնելու (ծածկելու, սևացնելու կամ ջնջելու) միջոցով՝ չխմբագրելով տեղեկության (փաստաթղթի) մնացած մասը: Եթե տեղեկատվություն տնօրինողի կողմից տրամադրվող տեղեկության նշանակալի (տասնհինգ և ավելի տոկոս) մասը պետք է անընթեռնելի դարձվի, ապա տեղեկությունը կարող է տրամադրվել թույլատրելի էջերի կամ քաղվածքի տեսքով:

Ուշադրություն: Խնդրում ենք հարցմանը պատասխանել բացառապես ***էլեկտրոնային եղանակով՝*** foi@foi.am հասցեին:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ, Հեռ.՝ (+37410) 560360 +37491407836, Էլ. հասցե՝ foi@foi.am Կայք՝ www.foi.am